

ՆԱԽԱԲԱՆ

Նախ եւ առաջ երկու խօսքով աշխատութեանս նպատակը ներկայացնեմ :

Դարերով եղած ենք զորդ արտադրող եւ վաճառող ժողովուրդ մը, սակայն ոչ մէկ ատեն եւ ոչ մէկ տեղ զոհացուցիչ պատմական եւ քննական աշխատութիւն մը ունեցած ենք, ուր ամփոփուած ըլլայ մեր եւ զորդին յարաբերութիւնը : Իմ նպատակս պիտի ըլլայ այդ պակասը լրացնել :

Տրուած պայմաններով աշխատասիրած նիւթս միայն այսքան կրնայի յառաջացնել, թէ եւ ընթերցողը զիւրաւ կրնայ տեսնել որ ընդարձակ նիւթի մը հետ է զործերնիս, ու ջանացած եմ մանրակրկիտ ընել ձեռնարկս, բնական է առանց կարենալու բառին բուն իմաստով սպառիչ ընել :

Ճարտարարուեստներու Հայոց կամ Հայաստանի մէջ ունեցած արուեստի կամ արհեստի անցեալ պատմութիւնը, զժրախտաբար բոլորովին անտեսուած, լքուած, չուսումնասիրուած ասպարէզ մըն է : Նիւթի մասին պատմական տուեալներ առատ են թէ՛ հայ եւ թէ՛ օտար գրական աղբիւրներու մէջ, սակայն զանոնք փնտռելու, զատելու, վերլուծելու համար մասնագէտ ուժեր դեռ կը պակսին մեր մօտ : Ի զուր է մեր մօտ փնտռել աշխատութիւններ՝ որոնք զոնէ ամփոփ եւ հարեւանցի ընդհանուր ակնարկով մեզի ներկայացնեն ոսկերչութեան, պղնձագործութեան, մետաղագործութեան, կաւագործութեան, փայտափորագրութեան, հիւսնութեան, ներկարարութեան, քարագործութեան, ոստայնանկութեան եւն. եւն. նիւթեր :

Առնենք զոնէ միայն ոստայնանկութիւնը, որուն մաս կը կազմէ զորդաշինութիւնը^(*) : Հակառակ որ նոյնիակ քրիստոնէութենէն ա-

(*) Հայ ձեռագրաց անձնական հաւաքածոյիս մէջ խիստ շահեկան հայերէնէ - հայերէն բառարան մը, 1387էն, տարբեր դրիչ մը աւելցուցած է. «Ոստան. - խալի զործող» : Դարձեալ ուրիշ մը «Ոստան-Քեմխայի առէջ» : Քեմխա պարսկ. Բխմխա բառն է, բայտ Գէորգ զպրի «մետաքսեայ եւ ծաղկեկար կերպաս ոստայնանկեալ պէսպէս դունով» :

Քանի որ բառարանի խօսք ըրինք, հաս տամ քանի մը յաւելուածական եւ հետաքրքրական ծանօթութիւններ : Սաղէմի թիւ 2403 ձեռագիրը բառարան մըն է թղթեայ, բոլորգիր գրուած Պնէ (1398)ին անձանօթ զրէ՛ մը, ուրեմն իմ բառարանէս 11 տարի վերջ : Հոս «գորգ. - կապերտ» կը նշանակէ : Զեռագրին մէջ յիշատակութեան մը համաձայն Ստոյխընկեցի Յակոբ վարդապետ 860 (1411)ին բառարանը 200 դահեկանի կը գնէ Յակոբ Մոկացիէն ի յԱստիսընկոյ վանքը : Սաղէմի թիւ 2399 թղթեայ, նօսրգիր, ՌՃԺԳ (1664)էն ունի «գորգ. - կապերտ», եւ «կապերտ. - փրլոն», կամ օթոց, կամ հին չոր» : Թիւ 2404 թղթեայ եւ նօսրգիր ժէ դարէն, նման է թիւ 2399ին եւ որով զորդի մասին նոյնը կը կրկնէ :